ՀՀ փաստաբանական դպրոցի

ընդունելության քննության հանձնաժողովի

նախագահ Ն. Յու. Բաղդասարյանին

Անուն_____

Հայրանուն _____ի

Ազգանուն_____ից

Էլ.հասցե_____

ԴԻՄՈՒՄ

ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային
հոսքի ընդունելության քննության մասնակցության

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննությանը:

Պարտավորվում եմ լրացված տվյալները փոփոխվելու դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան 3 (երեք) օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել ընդունելության քննության հանձնաժողովին (այսուհետև՝ Հանձնաժողով): Միաժամանակ պարտավորվում եմ Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

Հավաստում եմ, որ ծանոթացել եմ ստորև նշված փաստաթղթերին և առարկություններ չունեմ.

1. «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրություն,
2. «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի ընդունելության քննության կազմակերպման և հանձնման կարգ,
3. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու կարգ,
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու և էլեկտրոնային հաղորդակցության իրականացման կարգ,
5. Հանձնաժողովի 05.11.2013 թվականի որոշում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննության ընթացքը տեսանկարանելու և տեսաձայնագրելու վերաբերյալ,
6. Հանձնաժողովի 04.11.2013 թվականի որոշում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության շտեմարանում ներառված թեստերի մշակման մեթոդաբանության վերաբերյալ:

Հավաստում եմ, որ՝

1. իմ առողջական վիճակն ինձ թույլ է տալիս լիարժեք մասնակցելու ընդունելության քննությանը,
2. համակարգչից օգտվելու իմ գիտելիքները բավարար են, մասնավորապես համակարգչի ստեղների, մկնիկի միջոցով համակարգչի մոնիտորի վրա նշված հրամանները կատարելու համար,
3. իմ կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը օրինական են,
4. տեղեկացված եմ, որ ծանուցումները ստանալու եմ իմ դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեին,
5. իրազեկված եմ, որ ընդունելության քննության ընթացքը կտեսանկարահանվի և (կամ) կտեսաձայնագրվի, իսկ քննական սրահներում տեղադրված կլինեն խլացուցիչ սարքեր, ինչպես նաև ընդունելության քննության ընթացքը on-line (օն լայն) կհեռարձակվի համացանցի միջոցով,
6. տեղեկացված եմ, որ փաստաթղթերը կեղծ ներկայացված լինելու կասկածի դեպքում Հանձնաժողովը իրավասու է դիմել իրավապահ մարմիններին:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը՝ ստուգելու իմ ներկայացրած բոլոր փաստաթղթերի իսկությունը, ինչպես նաև ինձ վերաբերող տեղեկությունների հավաստիությունը:

Դիմումին կից ներկայացնում եմ (նշել)՝

- անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի կամ փախստականի վկայականի) պատճենը,
- ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկը,
- 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ սովորական ձևաչափով, գունավոր, վերջին մեկ տարվա վաղեմության,
- մեկ լուսանկար՝ “JPEG” ձևաչափով, գունավոր, վերջին մեկ տարվա վաղեմության,
- 35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի վճարման փաստը հաստատող փաստաթղթի (բանկային փոխանցման անդորրագրի) պատճենը,
- իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ունենալու փաստը հաստատող փաստաթղթի (դիպլոմի) պատճենը կամ տեղեկանք բուհից,
- օտարերկրյա պետությունում ձեռք բերած բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճանի՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով ճանաչումը և համարժեքության հաստատումը հավաստող փաստաթուղթ:
- այլ փաստաթղթեր[1] _____

_____ / / _____

ստորագրություն օր,ամիս,ամսաթիվ

ՍՏԱՑԱ՝ _____ Հանձնաժողովի անդամ

[1] Նշել, թե ինչ փաստաթուղթ եք ներկայացնում: